ՉԱՐԻ ԵՎ ԲԱՐՈՒ, ՍԻՐՈ ԵՎ ԱՆՁՆԱԶՈՀՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՐՁԱԿ ՊՈԵՄՆԵՐՈՒՄ ՈՒ ԼԵԳԵՆԴՆԵՐՈՒՄ

«Ոտքերը հողի մեջ էին, ճակատը երկինքոտ էր, կուրծքը բաց էր հողմերի ու հովերի առաջ... Ամենքինն ու ամենինն էր նա, եզակիորեն ինքը, իր անկողոպտելի ու անսպառ ինքնությամբ, ինքն իր մեջ, ինքն իր հետ: Բաշխվում էր ու չէր սպառվում»,- Հ. Սահյանի շիտակ բնութագրմամբ՝ այսպիսին է Ավ. Իսահակյանը:

Ճշմարիտ որ անսպառ է նա. ինչքան էլ գանձեր է շռայլել ծով դարանից իր հոգու, դարձյալ չի սպառվել:

Չարի և Բարու, Սիրո և Անձնազոհության փոխհարաբերության խնդիրն Իսահակյանը քննել է «Չինգիզ-խանը» (1907), «Շի-Հուանգ-Տի Բողդիխանը» (1907), «Սգավոր արագիլը» (1912), «Մի սոխակի մահը» (1913), «Ուրշինարա» (1923), «Բուդդիան թռչուն» (1925) ստեղծագործություններում:

Մարդկային հոգու մեջ բարի և չար նախահիմքերի հարաբերակցության բացահայտումը 20-րդ դարի գիտության և արվեստի հիմնախնդիրներից մեկն էր, որից չէր կարող անմասն մնալ Ավ. Իսահակյանը: Այս խնդրի նկատմամբ հետաքրքրությունը պայմանավորված էր թե՛ համաշխարհային քաղաքական իրադրությամբ (հեղափոխություններ, համաշխարհային պատերազմ) և թե՛ ազգային ճակատագրով (շարունակական բռնություններ, 1915թ. Մեծ եղեռն):

Հոգեվերլուծական փիլիսոփայության մեջ տարբերակվում է բռնության կամ ագրեսիվության երեք ձև՝ բարորակ, պաշտպանողական և չարորակ ագրեսիա[1]: Չարորակ ագրեսիան հատուկ է միայն մարդուն, քանի որ միայն մարդն է, որ ընդունակ է տանջել, սպանել իր նմաններին և դրանից բավականություն ստանալ: Չարորակ ագրեսիայի դրսևորումներից է Դաժանությունը (կամ՝ Դեստրուկտիվությունը), որի գլխավոր ենթատեսակը սադիզմն է: Ըստ Զիգմունդ Ֆրոյդի՝ սադիզմը էրոսի (կյանքի բնազդ) ու Թանատոսի (մահվան բնազդ) խառնուրդն է և ունի էքստրավերտ (դեպի դուրս) ուղղվածություն: Սադիզմի հիմքը, ըստ Էրիխ Ֆրոմի, կենդանի էակների վրա քացարձակ և անսահմանափակ իշխանության կիրքն է կամ ծարավը: Սադիզմն առաջ է գալիս անկարողու-

[1] Տե՛ս Յու. Հովականյան, Հոգեվերլուծական փիլիսոփայություն, Եր., 2001, էջ 124:

նակության զգացումից: Անհատը, անկարող զգալով կյանքի նկատմամբ, ձգտում է փոխհատուցել իր այդ թերությունը մարդկանց վրա ձեռք բերած հսկայական իշխանությամբ: Սադիստը չի բավարարվում իր ունեցած իշխանությամբ. նա անընդհատ ձգտում է ավելիին: Բայց, դրանով հանդերձ, նա դժբախտ, միայնակ ու սարսափներով լի արարած է:

Ավ. Իսահակյանի «Չինգիզ-խանը» լեգենդում բռնակալություն երևույթը բացահայտվում է կերպարի բռնակալական խառնվածքով թելադրվող վարքագծի դրսևորման միջոցով:

Իսահակյանը լեգենդը կառուցել է բռնակալի կեցվածքի թվացյալ զորեղության և բնության օրենքի կայուն հզորության հակադրության կարգով. «Հզոր է Չինգիզ-խանը. նա կարող է հրամայել մի վայրկյանում խալիֆաների Բաղդադը Տիգրիսի փրփրաբաշ ալիքների տակ ծածկել. Արաբստանի անապատների ծովածածան ավազը մինչև արևի ակը բարձրացնել. նրա հրամանով կարող են ֆրանկների աշխարհը հողի տակ թաղել... Սակայն նա անզոր է մի նժույգի սանձահարել»[2]:

Լեգենդում թե՛ «մատաղ եղնիկների բույլեր-չքնաղ, մարմարիոնե աղջիկները», թե՛ «արևի աշխարհներից բերված և արևի խանդավառ երազներով արբեցնող հարյուր տարվա հրաբորբոք գինին» և թե՛ «հրեղեն կրծքով Չինու հազարամյա պարիսպները խորտակած և հզոր սմբակներով էլբրուսի պողպատե կողերից ժայռեր պոկած մրրկածին նժույգը» կյանքի խորհրդանիշներն են: Կյանքը թռչնակի պես թպրտում էր խանի հզոր բռունցքի մեջ, քանի դեռ ժամանակը կամաց-կամաց նրա հզոր բռունցքը չէր թուլացրել և նրա բացված ափից անդարձ թռցրել կյանքի թռչնակին:

«Իմ թագավորությունը չարժե երիտասարդ հովիվի կրակե մի համբույրին»,- մոլեգնած բացականչում է խանը, որ,- գրում է Գ. Հովհաննիսյանը,- իսահակյանական ենթատեքստում հնչում է որպես ապրելու, վայելելու ժողովրդի մարդկանց առօրեական կյանքի պաշտամունք «սույն այս հզորների» փառասիրական մարմաջի, զորեղության մոլուցքի կողքին: Մարդն է արքանանում Չինգիզի մեջ, արքանանում է, սակայն ողբերգականորեն ուշ»[3]:

Չենք կարող համաձայնել Գ. Հովհաննիսյանի հետ, որը, Չինգիզի՝ անկարողունակության զգացումից ծնված «Իմ թագավորությունը չարժե երիտա-

---

[2] Ավ. Իսահակյան, Եժ. 6 հատորով, հ. 3, Եր., 1975, էջ 132 (Իսահակյանի վեցհատորյակից բերված մյուս մեջբերումների հղումները կտրվեն տեղում՝ փակագծի մեջ, կնշվեն միայն հատորը և էջը):
[3] Գ. Հովհաննիսյան, Ավետիք Իսահակյանի արձակը, Եր., 1963, էջ 159-160:

սարդ հովվի կրակե մի համբույրին» միտքը հիմք ընդունելով, եզրակացնում է, թե մարդն է արթնանում Չինգիզի մեջ: Ընդունենք, որ խանի գլխում հանկարծակի ծագած այդ միտքը հավերժին ու անեզրին տիրանալու մարդկային ձգտումն է արտահայտում, բայց հարց է առաջանում՝ ինչպիսի՞ վարքագիծ դրսևորեց «նրա մեջ արթնացած մարդը».

«-Վեզի՛ր, հրամայում եմ իմ պետության բոլոր աղբյուրներն ու գետերը, ծովերն ու օվկիանոսները թունավորեցեք, որ ինձ հետ մեռնեն ամենքը, ամենքը...» (հ. 3, էջ 134):

Չինգիզի վերջին ցանկությունը՝ իր հետ ամենքին մեռցնելու ձգտումը, բացարձակ էգոիզմի (ինդիվիդուալիստական փիլիսոփայության գլխավոր դրույթներից մեկը) արտահայտություն է: Խանը իր սեփականությունն է համարել ոչ միայն իր, այլև իր տիրապետության տակ գտնվող ամենքի կյանքը:

«Մարդ չպիտի մտածի աշխարհից բան տանելու մասին, այլ աշխարհում բան թողնելու մասին»[4].- սա իսահակյանական մարդու բարոյական նկարագիրն է: Չինգիզ խանը՝ աշխարհում բան չթողնելու իր փափագով, այս նկարագրի մեջ դժվար թե տեղավորվի:

Ի տարբերություն Չինգիզ-խանի, որը ձգտում էր իր տիրապետությունը հաստատել ոչ միայն կյանքի, այլև մահվան վրա, Շի-Հոանգ-Տի Բողդիխանը ձգտում է տիրել Ոգուն ու Մտքին:

«Չին կայսր Շի-Հոանգ-Տի Բողդիխանը, չհագեցնելով աշխարհակալ իշխանությամբ, ձգտում է իրեն ստրկացնել մարդկային միտքը, նրա ստեղծարար ուժն ու նվաճումները: Նրան հարկավոր էր մարդկային հոգևոր մտքի ստույգ և հաստատ ստրկացում»,[5]- գրում է Ավիկ Իսահակյանը՝ Բողդիխանի իմացության ձգտումը ևս բռնակալական մղում համարելով:

Շի-Հոանգ-Տի Բողդիխանի ձգտումը՝ իմանալու, թե ինչ է նյութը, պատճառն ու հետևանքը, ժամանակն ու տարածությունը, երբ է տիեզերքի սկիզբն ու վախճանը, որն է մարդու գոյության իմաստը և այլն, այդուամենայնիվ, սոսկ բռնակալական մղում չէ, այլև իմացության ծարավ. Բողդիխանը ձգտում է դեպի տիեզերական միտքը, տանջվում Տիեզերք-Սֆինքսի մեծությունից: Իսահակյանի մշակած կերպարը տվյալ դեպքում պարզ ու միագիծ բռնակալ չէ, այլ բարդ ու հարուստ ինքնություն:

«Ինչ է և ինչու է»-ին չտիրապետելու, դրանց ոչ հասու լինելու գիտակցությունն է մղում Բողդիխանին ոչնչացնելու ինչպես աստղադիտարանն ու մա-

---

[4] Ավ. Իսահակյան, Ծանոթ և անծանոթ էջեր, Եր., 1988, էջ 315:
[5] Ա. Իսահակյան, Ավետիք Իսահակյանի արձակը, Եր., 1975, էջ 56, 57:

տյան-մագաղաթները, այնպես էլ իր առջև լոտոսի տերևների պես դողացող չորս հարյուր հիսուն իմաստուն այրերին:

Հետաքրքիր է, որ Բողդիխանի տիրապետման ձգտումը ժամանակի երեք չափումների վրա էլ տարածվում է՝ անցյալի, որի մեջ մտնում էին իր մոխրացրած մատյաններն ու մագաղաթները, ներկայի, որն ընդգրկում էր գործող իմաստուններին ու գիտուններին, որոնց ևս ոչնչացրեց, և վերջապես՝ ապագայի, որն ուրվագծվում է իր կազմած հրովարտակի մեջ.

«- Հրովարտակեցեք մեր պարիսպներից մինչև դարբասները երկնածրար Հիմալայի և մինչև ափերը մեծ օվկիանոսի, որ այսուհետև (ընդգծ՝. Հ. Վ.) երկնային պետության սահմաններում չպիտի գրվի ոչ մի գիրք «Ի՞նչի և ինչու՞ի» մասին, չպիտի խորհվի կյանքի նպատակի մասին, չպիտի հարցվի պատճառների պատճառի մասին, իրերի սկզբի և վախճանի մասին, չպիտի քննվեն տիեզերական գաղտնիքները, և մանավանդ ոչ մի շշուկ ժամանակի-տարածության առեղծվածի մասին: Երբե՛ք, երբեք» (հ. 3, էջ 127):

Իսկ այն հարցի, թե ինչու Բողդիխանն ինքնասպան եղավ, դաշույնը սեփական ձեռքով իր սիրտը խրեց, պատասխանը հենց տեքստի մեջ է. «...Շի-Հոանգ-Տի Բողդիխանը սպանեց Ոգին ու Միտքը, որովհետև Ոգին մղում է դեպի անհուսություն, Միտքը՝ դեպի մահ» (հ. 3, էջ 127): Այսինքն՝ Բողդիխանը իրենից դուրս փորձեց սպանել Ոգին ու Միտքը, բայց չէ՞ որ Ոգին ու Միտքը ինչ-որ ձևով նաև ի'ր մեջ էին, ուստի չէր կարող սպանել Ոգին ու Միտքը՝ առանց ինքն իրեն սպանելու:

Սիրո մասին Իսահակյանի այն բանաձևումը, թե՝ «Սերը, իսկական սերը արտահայտվում է միայն զոհաբերության մեջ»[6], գեղարվեստորեն արտահայտվել է «Սգավոր արագիլը», «Մի սոխակի մահը» արձակ պոեմներում և «Ուշինարա», «Բուդդիան թռչուն» լեգենդներում:

Գեղագետի խորաթափանց հայացքով թռչունների վարքագծի մեջ Ավ. Իսահակյանը անձնվեր սիրո երևույթն է որսացել («Սգավոր արագիլը», «Մի սոխակի մահը»):

Անձնվեր սերն առաջին հերթին նշանակում է տալ և ոչ թե վերցնել: Տալը, ինքնանվիրումը, անձնազոհությունը այդպիսի սիրո դեպքում ինքնանվիրվողի վեհության, հզորության, հոգևոր հարստության մեծագույն առհավատչյան են:

Որսորդների անգութ ձեռքով մայր-արագիլը զարկվեց, իսկ հայր-արագիլը՝ «Տեսնելու բան էր, թե ինչպես խեղճը թևակոտոր ընկավ կնոջ դիակի վրա, լալագին ձայնով լա'կ-լա'կ արեց,վեր ու վար թռավ, թևերով երբեմն իր գլխին էր

[6] Ավ. Իսահակյան, Ծանոթ և անծանոթ էջեր, Եր., 1988, էջ 302:

խփում, երբեմն՝ չոր գետնին... Մութը որ իջավ՝ թևերը քարշ տալով հասավ բույնը, որը ծագերին ծվարեց թևերի տակ և լռեց: ... Առավոտ վաղ թռչում էր բույնին մոտիկ դաշտերը, գետափերը, աչքը միշտ պահելով բույնի վրա. պարեն էր հավաքում, բերում ծագերին տալիս» (հ. 3, էջ 52):

Հայր արագիլի վարքագծի մեջ հատկանշականը նրա անկոտրում կամքն է, որով նա հաղթահարեց բոլոր խոչընդոտները և մինչև վերջ անդրդվելի մնաց իր անձնվիրության մեջ.

«Ամեն օր գնում էր նա այնտեղ (կնոջ զարկված տեղը-Հ. Վ.), մի ոտքի վրա ժամերով տխուր կանգնում՝ վիզը ծռած, գլուխը թևերի տակ: ...Այսպես երեք թե չորս տարի ապրեց նա սգվոր, ապրեց մենակ ու կատարյալ այրի» (հ. 3, էջ 52, 53):

Անձնազոհ հոգու է՛լ ավելի հուզիչ ու նրբին ծալքեր է բացում Ավ. Իսահակյանը «Մի սոխակի մահը» արձակ պոեմում սիրո համար կյանքը տված թռչնակ-երգչի միջոցով:

Սիրավառ սրտի, հրեղեն արցունքների և անծայր կարոտի մի դյութական հեքիաթ ստեղծելով շուրջը՝ նռենու ճյուղերի միջից երգեց սիրառատ սոխակը, երգեց մեղմ ու սուր հնչյուններով, սիրո բյուրաբյուր նրբերանգներով: Բոլորանվեր տրվելով, իրեն ոչ մի հուր չթողնելով՝ երգեց սոխակը սիրո երգը՝ այդ երգի մեջ էլ իր մահը գտնելով.

«...Նորից սկսեց երգել սոխակը, հաղթական երգիչը. և այս անգամ ավելի հզոր, և ավելի բարձր՝ ամբողջ հուր ու բոց, ամբողջ խանդ ու ոգի. ամեն մի հնչյունի մեջ՝ իր սրտից մի կտոր:

Անհուն երջանկության և պայծառ ուրախության բոցեղեն գինու մի շատրվան էր նրա երգը, որ կայլակում էր շողշողալով դեպի վերև՜, դեպի վերև՜...

Եվ հանկարծ, ասես սրի մի հարվածով երգը կտրվեց, և երգիչը գլխիվայր ընկավ նռենու տակ» (հ. 3, էջ 55):

Եթե «Սգավոր արագիլը» ու «Մի սոխակի մահը» արձակ պոեմներում անձնազոհությունն իրագործվում էր զուտ հանուն սիրո, ապա «Ռէշինարա» և «Բուդդհան թռչուն» լեգենդների մեջ զոհաբերության հիմքում ընկած է բարոյական պարտքի գիտակցությունը:

Մի կողմից՝ բնական, մյուս կողմից՝ բանական էակ է մարդը: Բնության օրենքները գոյություն ունեն պատրաստի վիճակում՝ անկախ մարդուց: Մինչդեռ բարոյական օրենքները մարդը՝ որպես բանական էակ, ինքն է ստեղծում:

Մարդը, ըստ Հեգելի, պիտի «բանականի բավարարումը սահմանափակի ոչ միայն անհրաժեշտության շրջանակներում, այլ ունակ լինի այն զոհաբերել ավելի վեհ պարտքի»[7]:

Բնության մեջ գործում է անհրաժեշտությունը, իսկ բարոյական կյանքում՝ պիտությունը: Այլ խոսքով՝ բարոյական օրենքի իրագործումը մարդու սուբյեկտիվ կամքով է պայմանավորված: Բարոյական օրենքների գլխավոր բաղադրիչը պարտք հասկացողությունն է, իսկ բարոյական պարտքի բնորոշ հատկանիշը՝ անձնազոհությունը: Վերջինս հասարակության մեջ ճշմարիտը, Բարին, Գեղեցիկը հաստատելու զորեղ միջոց է:

«Դարվինի տեսությունը կենդանական աշխարհին է վերաբերում և այդ առումով էլ ճշմարիտ տեսություն է, բայց մարդը իրավունք չունի այդպես դատելու, նա պարտավոր է թույլերին պաշտպանել»,[8]- բնության օրենքները հասարակության վրա չտարածելու նկատառումով այսպես է արտահայտվում Ավ. Իսահակյանը:

Իր հիմքում ունենալով հանուն բարոյական պարտքի՝ անձնազոհության գաղափարը՝ «Ուշինարա» լեգենդը զարգանում է բնական և բարոյական օրենքների բախման սկզբունքով: Ուշինարան բարոյական օրենքների կրողն ու գործադրողն է, իսկ աղավնուն հետապնդող անգղը՝ բնության օրենքների.

«-Դատավո՛ր,- դիմեց անգղը Ուշինարային,- քաղցը վաղուց ընկճել է ինձ: Մեծ հանցանք է քաղցածի ձեռից խլել նրա սնունդը: Ե՛տ տուր ինձ աղավնին: ...Դու պարտաճանաչ մարդու հռչակ ունես, սակայն ինչու՞ պարտքի օրենքին հակառակ ես գնում: Ինչու՞ ես ինձ զրկում իմ անհրաժեշտ սնունդից:

- Այս անօգնական, մահի սարսուռով դողդոջուն թռչունը իմ պաշտպանությանը դիմեց, - առարկեց Ուշինարան,- դու՛, հզոր անգղ, մի՞թե չես տեսնում, որ իմ առաջին պարտքն է-չհանձնել ինձ հավատացող արարածին իր հոշոտող թշնամուն» (հ. 3, էջ 218, 219):

Կշեռքի բարոյականության նժարը, ի վերջո, ծանր կշռեց բնության օրենքի նժարից՝ Ուշինարայի անմնացորդ զոհողության գնով:

«Բուդդհաս թռչուն» լեգենդում անձնազոհության հիմքը տառապյալ մարդու հանդեպ Բուդդհայի մեծ կարեկցությունն ու սերն է, իսկ նպատակը՝ ապրելու կամեցողությամբ տառապող մարդու փրկությունը.

«-Կամենալ ապրել,- խոսեց նա յուրովի,- ահա՛ չարիքի հավերժական արգանդը, որ բնավ չի ստերջանում:

---

[7] Տե՛ս Գ.Վ.Ֆ. Հեգել, Փիլիսոփայության ներածություն, Եր., 1964, էջ 109:
[8] Աղավնի, Նրա մտերմական աշխարհում, Եր., 1975, էջ 34:

Եվ ամենքը կամենում են ապրել, և յուրաքանչյուրը կամենում է ապրել-մարդը երկրի վրա, և որդը տիղմի մեջ և հուլտը հողի տակ» (հ. 3, էջ 222-223):

Թռչունի կերպարանք առած Բուդդհան իր անձնազոհ արարքով, որը բարոյական վարքագծի դրսևորում է, նպաստեց բնության օրենքի անհրաժեշտ գործունեությանը, բացասելով հաստատեց ապրել կամենալու անպարտելի անհրաժեշտությունը.

«-Ո՛վ ապրելու դառն անհրաժեշտություն,- խոսեց նա իր սրտի մեջ: Անհուն է ձեր տառապանքը, ո՛վ ապրողներ. անսկիզբ և անվախճան ժամանակի մեջ եկող ու գնացող և վերստին եկող, ո՛վ անհամար թշվառներ:

Անհու՜ն է ապրել կամեցողի տառապանքը:

Բայց թո՛ղ ապրի այս մանուկը... օ՛մ, օ՛մ, օ՛մ...

Այս ասաց թռչունը և իրեն նետեց խարույկի մեջ» (հ. 3, էջ 223):

Բարոյակրթող հզոր լիցքերով օժտված գաղափարաբանությամբ հանդերձ՝ Ավ. Իսահակյանի արձակ պոեմներն ու լեգենդները գեղարվեստի մնայուն արժեքներ են՝ ձևի և բովանդակության ներդաշնակ համադրությամբ:

Որպես գրական ժանր՝ արձակ բանաստեղծությունը (կամ՝ պոեմը) միջանկյալ դիրք է գրավում իր բովանդակությամբ պատմվածքի ու քնարական բանաստեղծության, իսկ ձևով՝ արձակի ու ռիթմիկ չափածոյի միջև: Ըստ այդմ՝ այն հեղինակին թույլ է տալիս առավել անկաշկանդ կերպով արտահայտել իր զգացմունքային վերաբերմունքը, հույզերն ու ապրումները՝ չենթարկվելով չափածոյի ձևական կանոններին: Արձակ պոեմը հենց այն ժանրն է, որն անհրաժեշտ էր «զգացմունքի տարերային անմիջականությամբ» (տերյանական հանճարե՛ղ բնորոշում) օժտված ստեղծագործողին՝ Իսահակյանին՝ «իրեն տանջող մտքերին ու զգացմունքներին ելք որոնելու, ներքին ճնշումից, հոգեկան բեռից ազատվելու»[9] համար:

Նմանապես և լեգենդի ժանրը, որի գեղարվեստական տիրույթում իրագործվում են աշխարհում նյութապես անիրագործելի մարդկային տենչանքներն ու ձգտումները. «Լեգենդները, առասպելները,-բնութագրում է Ավ. Իսահակյանը,- ցանկությունների արդյունք են: Մարդկային տեսիլները, ձգտումները առասպելների, լեգենդների մեջ գտնում են իրականացում, բովանդակություն, վարձատրություն: Այն, ինչ չի կարելի աշխարհում նյութապես իրականացնել, իր կենսագործումը, ուրեմն, գտնում է երազների, տեսիլների, լեգենդների, ա-

---

[9] Դ. Դեմիրճյան, Եժ, հ. 8, Եր., 1963, էջ 199:

ռասպելների, պոեզիայի մեջ: Դրանով, դրանց միջոցով տենչացող հոգին հանգստանում է ու բավարարվում»[10]:

Իրենց խորքով ու խտությամբ Իսահակյանի արձակ պոեմներն ու լեգենդները խոհափիլիսոփայական արձակի չխունացող արժեքներ են: Որ ոլորտում էլ դրսևորվի՝ տիեզերքի, թե աշխարհի, կյանքի, թե մահվան, բարու, չարի, թե սիրո, միևնույն է՝ Իսահակյանի խոհը հունցված է լույսից և մարդու հանդեպ բացառիկ սիրուց, այնպիսի սիրուց, որի միջոցով հոգին տիեզերանում, և տիեզերքը հոգիանում է:

Ընդգծելով ժամանակի վճռորոշ դերը գրական- գեղարվեստական երկի պատմագործառնության համակարգում՝ Ավ. Իսահակյանը գրում է. «Ժամանակը, ամեն ինչ ժամանակն է որոշում: Ժամանակը, եթե նրա ազդեցության տակ ես, մոլորեցնում է, բայց հետո հաջորդ ժամանակները ճշտում են արժեքները, մաղից անց են կացնում, և ինչ որ կապված է միայն ժամանակի հետ՝ մաղից անցնում է, որպես իր դերը կատարած, որպես պատմական արժեք միայն, իսկ այն, որ ժամանակի հետ կապված լինելով, նաև ընդհանրական է՝ մնում է մաղում և շարունակում իր կյանքը նաև հետո, երբեմն շատ երկար, անգամ դարերով»[11]:

Ավ. Իսահակյանի ստեղծագործության դեպքում գործում է այս վերջին տարբերակը. նրա երկերն անվերապահորեն դասվում են «ժամանակների մաղի» մեջ մնացած այն արժեքների թվին, որոնք անմահ են հանճարեղի համար նախասահմանված հավերժության օրենքով:

---

[10] «Գրական թերթ», 1960, N 44:
[11] Ռ. Զարյան, Ավետիք Իսահակյան, Եր., 1974, էջ 71: